ԵԴ/45831/02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

11 նոյեմբերի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Ռուստամ Բաղայանի ընդդեմ Նարեկ Մալյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին քաղաքացիական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 4-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2019 թվականի դեկտեմբերի 30-ին Ռուստամ Վարդանի Բաղայանն ընդդեմ Նարեկ Բորիսի Մալյանի հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին: Դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 6-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

2. Նույն դատարանի՝ 2021 թվականի մարտի 19-ի վճռով Ռ.Բաղասյանի հայցը մերժվել է:

3. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ Ռ.Բաղասյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 19-ի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

5. Նույն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

6. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

7. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 4-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

8. Հայցադիմումում որպես հայցվորի հասցե նշվել է՝ *«ք. Երևան, Ռիգայի 126/4, բնակարան 29»*[1]:

9. 2022 թվականի սեպտեմբերի 8-ի դատական նիստում պատասխանող Ն. Մալյանի ներկայացուցիչ Տ.Աթանեսյանը հայտնել է, որ Ն.Մալյանը հաշվառված է Կոտայքի մարզ, գյուղ Գողթ, Գեղարդի խճուղի 3, փակուղի 3 տուն հասցեում և առարկել է գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննելու վերաբերյալ՝ խնդրելով քաղաքացիական գործն ուղարկել ըստ ընդդատության[2]:

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1-ին, էջ 4:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 4-րդ, էջ 63:

10. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, 25-րդ հոդվածի 4-րդ մասին, 121-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հետևյալ հիմնավորմամբ. *«(….) Տվյալ դեպքում, դատարանն, ուսումնասիրելով քաղաքացիական գործում առկա նյութերը, պարզել է, որ դեռևս 2020թ. հունվարի 24-ին հայցադիմումը դատարան կրկին ներկայացնելիս պատասխանող Նարեկ Մալյանի հասցեն նշվել է ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 18-16:*

(…) Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործով դեռևս ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվել, հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման վայրի դատարանում, բացի այդ, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի՝ պատասխանողի ներկայացուցիչը առարկել է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, իսկ նույն գործով կիրառելի չէ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածների կանոնները, հետևաբար, ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020թ. հունվարի 24-ին կրկին ստանալով հայցադիմումը, այն վարույթ է ընդունել ընդդատության կանոնների խախտմամբ, որն էլ հիմք և պարտադիր պայման է գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար:

Տվյալ դեպքում, պատասխանող Նարեկ Մալյանի հաշվառման վայրի հասցեն չի ընդգրկվում Երևան քաղաքի տարածքում, ուստի դատարանը ընդդատության կանոնների պահպանման նկատառումով գտնում է, որ ըստ հայցի Ռուստամ Վարդանի Բաղասյանի ընդդեմ Նարեկ Բորիսի Մալյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված՝ 2.000.000 ՀՀ դրամ վնասի հատուցման պահանջի մասին հա. ԵԴ/45831/02/19 քաղաքացիական գործը պետք է հանձնել

պատասխանող Նարեկ Բորիսի Մայլանի հաշվառման վայրի՝ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»[3]:

11. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 5-րդ մասին՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2022 թվականի հոկտեմբերի 4-ին, քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով որ. *«(….) Ներկայացված հայցադիմումում որպես հայցվոր Ռուսլան Վարդանի Բաղասյանի հասցե՝ նշված է ՀՀ, ք. Երևան, Ռիգայի 126/4, բնակարան 29 հասցեն, որի գտնվելու վայրի դատարան և ներկայացվել է հայցադիմումը, որպես այլընտրանքային դատարան, հետևաբար նշված պարագայում պահպանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այլ դատարանի քննությանն է հանձնվում նույն օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը:*

Վերը նշվածի հիման վրա՝ Դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն քաղաքացիական գործը պետք է քննվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, այսինքն՝ համաձայն չէ ստացված գործի տարածքային ընդդատությանը (….)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/45831/02/19 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Ռ.Բաղասյանի ընդդեմ Ն.Մայլանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի*

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 4-րդ, էջ 66-68:
[4] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 4-րդ, էջ 76-78:

հարուցման պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

13. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան,* ***եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով****»:*

Օրենսգրքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Առողջությանը,* ***պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին*** *կամ կերակրողի մահվամբ* ***պատճառված վնասի հարուցման վերաբերյալ հայցը կարող է ներկայացվել հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան*** *կամ վնասը պատճառելու վայրի դատարան»:*

14. Նախորդ կետում վկայակոչված իրավանորմերի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը տարածքային ընդդատության ընդհանուր կանոնից բացառություններ է նախատեսել: Մասնավորապես, նշված հոդվածով օրենսդիրը, ի թիվս այլնի, անձի պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հայցատեսակներով սահմանել է այլընտրանքային ընդդատության կանոն՝ հայցվորին հնարավորություն ընձեռելով հայցադիմումը ներկայացնել նաև հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- հայցադիմումում որպես հայցվորի հասցե նշվել է՝ *«ք. Երևան, Ռիգայի 126/4, բնակարան 29»*[5],

- 2022 թվականի սեպտեմբերի 8-ի դատական նիստում պատասխանող Ն. Մալյանի ներկայացուցիչ Տ.Աթանեսյանը հայտնել է, որ Ն.Մալյանը հաշվառված է Կոտայքի մարզ, գյուղ Գողթ, Գեղարդի խճուղի 3, փակուղի 3 տուն հասցեում և առարկել

[5] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

է գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննելու վերաբերյալ՝ խնդրելով քաղաքացիական գործն ուղարկել ըստ ընդդատության[6],

- 2022 թվականի սեպտեմբերի 8-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել քաղաքացիական գործն ըստ ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին՝ հաշվի առնելով, որ պատասխանող Ն.Մալյանի հաշվառման վայրի հասցեն չի ընդգրկվում Երևան քաղաքի տարածքում:

Դատարանը գտել է, որ, ընդդատության կանոնների պահպանման նկատառումով, ըստ հայցի՝ Ռ.Բաղասյանի ընդդեմ Ն.Մալյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին քաղաքացիական գործը պետք է հանձնել պատասխանող Ն.Մալյանի հաշվառման վայրի՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը[7],

- 2022 թվականի հոկտեմբերի 4-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար այն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ ներկայացված հայցադիմումում որպես հայցվոր Ռ.Բաղասյանի հասցե՝ նշված է ՀՀ, ք. Երևան, Ռիգայի 126/4, բնակարան 29 հասցեն, որի գտնվելու վայրի դատարան է ներկայացվել հայցադիմումը՝ որպես այլընտրանքային դատարան: Հետևաբար, նշված պարագայում պահպանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնը[8]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն գործով հացվորը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 5-րդ

[6] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

մասում սահմանված այլընտրանքային ընդդատության կանոնի կիրառմամբ, պատվին, արժանապատվությանն ու գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով հայցադիմումը ներկայացրել է իր հաշվառման վայրի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալ պատճառաբանությամբ գտնում եմ, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/45831/02/19 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Ռ.Բաղասյանի ընդդեմ Ն.Մալյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/45831/02/19 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Ռուստամ Բաղասյանի ընդդեմ Նարեկ Մալյանի՝ պատվին արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ